ԼՂՀ վարչապետն առաջարկում է ունենալ «աղքատ երկրի» ապարատ

ԱՐՄԵՆՊՐԵՍ: «2001 թվականին նախատեսվում է ԼՂՀ պետբյուջեի հաշվին կատարվող ծախսերը նվազեցնել 2 մլրդ դրամով, որից 0,5 մլրդը՝ լրավճարների (դոտացիա) գումարից»,- հայտարարել է ԼՂՀ վարչապետ Անուշավան Դանիելյանը ուրբաթ օրը կառավարության անդամների մասնակցությամբ տեղի ունեցած աշխատանքային խորհրդակցությունում, որի օրակարգում 2001 թ. պետական բյուջեի նախապատրաստման հարցն էր: «Ես դեմ եմ «շոկային թերապիային»,- ասել է վարչապետը,- սխալ եմ համարում մշակութային, սոցիալական ծախսերի կրճատումը, կողմ չեմ նաեւ ծախսերի նվազեցմանը կապիտալ շինարարության հաշվին (մենք խնդիր ունենք հնարավորինս արագ վերականգնել ավերված բնակավայրերը): Ուստի, մնում է մի բան՝ նվազեցնել կառավարման ծախսերը, դրանք մղել երկրորդ պլան: Իհարկե, «աղքատ երկրի» ապարատ եմ առաջարկում,- շարունակել է Ա.Դանիելյանը,- սակայն մեկ տարի դիմանալ կարելի է, մանավանդ այն գիտակցությամբ, որ դա ժամանակավոր է, բայց՝ անհրաժեշտ»: